№ 194 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 194

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշով: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Վ. ԵՒ ՍՏ. ՍՄԲԱՏԵԱՆՆԵՐԻ

Պատրաստվում են տղաներ, աղջիկներ բոլոր միջնակարգ դպրոցներ մտնելու: Մայիսին և օգոստոսին քննութեան ենթարկվողները բոլորը ընդունվեցին: Հայ երեխաներին մայրենի լեզուն պարտադիր է: Կայ երկու գիշերօթիկի տեղ: Ընդունելութիւնները ամենայն օր: Պարապմունքները սեպտեմբերի 1-ից: Փողոց Պասկէվիչի, № 13.

տ. (Կ. Ե. Հ.) 602. 5—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Ուրբաթ, սեպտեմբերի 4-ին, արտիստ Ս. ԹՈՐՈՍԵԱՆԸ, մասնակցութեամբ արտիստ-արտիստուհիների, երկրորդ անգամ կը ներկայացնի ասիական ուրախ օպէրէտ՝

ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ
(Շրջիկ մանրավաճառ)
4 գործ. Թարգմ. Ս. Մաղալեանի

Արևելեան օրկէստր՝ Թարգմ. Սեդրակ Մաղալեանի ղեկավարութեամբ:

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ $8^1/_2$-ին:
Տեղերի գները 50 կ.-ից մինչև 1 ռ. 25 կ.:
Կարգադրիչ՝ Ս. ԹՈՐՈՍԵԱՆ

Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպէկ:

տ. 610. 3—1

ԿՈՒԿԻՈՒՑ ս. Աստուածածնի ծխ. երկու սեռի դպրոցի նորաբաց առաջին դաս. դասարանում ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է: Դասարանը կը բացվի այն դէպքում, երբ աշակ.-աշակերտուհիների թիւը համնի առնուազն 40-ի: ՈՒՍՈՒՄՆԱՎՃԱՐԸ 20 ռ.: Խնդիրները պէտք է շտապել ներկայացնել դպրոցի ուսուց.-ուսուցչին: (Միքայէլեան պ. 8):

Հոգաբարձութիւն

տ. 605. 3—3

Բերլինի համալսարանի
ԲԺԻՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՑՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՆԵՒՄՈԹՈՐԱԿՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան: ՇԱԲԱԹՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская, 23. тел. 7—29

տ. (ա. օ.) 504. 100—29

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն: Ատամի հեռացումը առանց ցաւի: Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով:
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից:

(ա. օ.) տ. 515. 100—30

ՈՐՏԵՂ Է ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

Առաջադիմական բլոկի կազմութիւնը և նրա ծրագիրը, որի էութեան հետ ծանօթ են մեր ընթերցողները, և որի մանրամասնութիւնները տալիս ենք այսօր, չը նայելով իր կոմպրոմիսային բնաւորութեան, ընդհանուր համակրութիւն է գտնում ռուս առաջադիմական, ազատամիտ, չափաւոր-պահպանողական և չափաւոր-ձախակողմեան մամուլի կողմից. Ռուսական երկու օրէնսդրական մարմինների՝ Պետական Խորհրդի և Պետական Դումայի առաջադիմական տարրերը, ի նկատի ունենալով հայրենիքի կրած ներկայ տագնապալի ճգնաժամը և փորձանքը, դրդված հայրենասիրական վեհ զգացումներից՝ փրկել հայրենիքը և ազատել նրան այդ տագնապից, կարողացել են միանալ որոշ հողի վրա. միութեան համար անհրաժեշտ էր, որ այդ տարրերը, պատկանող որոշ հոսանքների և ուղղութիւնների, փոխադարձ զիջումներ անեն իրար. բնական է, որ համաձայնութիւնը, միութիւնը կարող էր արտադրել միայն կոմպրոմիսային ծրագիր, այսինքն մի ծրագիր, որի շուրջը կարողանային համախմբվել տարբեր տարրերը՝ առաջադիմական տարրերը՝ պաշտպանելու նրան և իրագործել տալու:

Այդ բլոկը կազմվել է և Պետական Խորհրդի ու Պետական Դումայի մէջ և ապա երկու օրէնսդրական մարմինների միջև:

Նա կոչվում է՝ «ձախ-կենտրոնային մեծամասնութեան բլոկ» և նրա ծրագիրը, որքան և կոմպրոմիսային, բայց ամփոփում է իր մէջ բոլոր այն հերթական և հասունացած խնդիրները, որոնց լուծումը պէտք է նոր ույժ և զօրութիւն տայ երկրին և նպաստէ նրան յաղթական դուրս գալ կրած ճգնաժամից. Այդ ծրագրի առաջին, անմիջական նպատակն է կառավարութեան իրական միութիւնը Պետական Դումայի կամ ժողովրդի հետ, այսինքն կայացած համաձայնութեան ծանրութեան կենտրոնը կայանում է նրա մէջ, որ անդառնալի կերպով ճանաչվել է անհրաժեշտութիւնը՝ ունենալու հասարակական վստահութեամբ օժտված մինիստրութիւն կամ կառավարութիւն, կամ ստեղծելու ժողովրդական մինիստրութիւն. Եւ ահա՝ երբ կը ստեղծվի այդպիսի մի մինիստրութիւն, նա կարող է մեծա- մեծ գործեր կատարել, հանել երկիրը իր ներկայ տագնապից, որովհետև այդ պարագայ միացեալ մինիստրութիւնը կը յենվի ստեղծված բլոկի վրա, որ կը պաշտպանէ նրան և Պետական Խորհրդի և Պետական Դումայի մէջ:

Ուրեմն ստեղծված պրոգրէսիվ բլոկի ծրագիրը պէտք է ողջունել, որովհետև նրա հիմնական, քաղաքական միտքը համակրելի է և կարևոր. այն է՝ ստեղծել չորրորդ Պետական Դումայի մէջ մի այնպիսի հոսանք, որի վրա երկիրը կամ ժողովուրդը կարողանայ յենվել՝ իր որոնումների մէջ մի ելք գտնելու ներկայ տագնապից: Այդ ծրագրի մէջ շեշտված են բոլոր այն էական պահանջները, որ անում է ռուսական մեծ ազգը քաղաքային դումաների, հասարակական և կուլտուրական կազմակերպութիւնների բերանով, որոնց արտայայտիչ հանդիսացան Մոսկվայի և Պետրոգրադի քաղաքային դումաները և որոնք արժանացան շնորհակալութեան Գահի Բարձրութիւնից:

Եւ որովհետև, կրկնում ենք, բլոկի ծրագրի ամենակարևոր մասը կազմում է ներկայ րօպէի մի կենսական և հրատապ պահանջը, այն է՝ կառավարութեան սիստեմը, ուստի այժմ խնդիրը կայանում է նրա մէջ, թէ կը կարողանա՞յ արդեօք բլոկը իրագործել այդ առաջին պահանջը, այն է՝ կազմել տալ մի իշխանութիւն, որ իրագործէ բլոկի մշակած ծրագիրը: Ոչ մի տարակոյս չը կայ, որ եթէ չը լինի մի իշխանութիւն, որ համաձայնութեան մէջ մտնէ բլոկի հետ, սա անկարող կը լինի իրագործել իր ծրագիրը:

Գալով մանր ազգութիւններին, պէտք է ասել, որ բլոկի ծրագիրը չէ մոռացել և նրանց շահերը, քանի որ իբրև հիմնական պահանջ դնում է Ռուսաստանի բոլոր ազգութիւնների համահաւասար իրաւունքներ վայելելու խնդիրը:

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 սեպտեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական: Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Օգոստոսի 30-ին ծովամերձ շրջանում հրացանաձգութիւն էր:

Օլթիի ուղղութեամբ մեր հետախոյզ զօրախմբերը ընդհարումներ են ունենում թիւրքական հետախոյզների դէմ Թէվլի մօտ:

Մանազկերտի ուղղութեամբ մեր զօրամասերը վանեցին թիւրքերին Արճէշից:

Մնացած զօրաճակատում փոփոխութիւն չը կայ:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Հռոմից հեռագրում են, որ «Idea Nazionale»-ը թղթակցութիւն է ստացել Հաբեշըստանից, որի մէջ խօսվում է, թէ թիւրք-գերմանական էմիսարները փորձում են փըչել Հաբեշստանի մեծերի պատւաւորութիւնը և դրանով արթնացնել նրանց կատաղելու իրանց վաղեմի երազը—դուրս գնալ դէպի ծով, արշաւել դրանով սոմալեան հաբեշաստացիներին յարձակվելու Իտալիայի և Անգլիայի հարևան տիրապետութիւնների վրա:

◆ Կ. Պոլսից եկող տեղեկութիւնների համաձայն, հայերի բնաջնջումը Թիւրքիայում կատարվում է անողոք կերպով կայսրութեան բոլոր գաւառներում, դրանց թըւում և Թրակիայում, նաև մայրաքաղաքի շրջակայքում: Հայկական ծաղկած բոլոր գիւղերը աւերված են, բնակիչները կողոպտված և խմբերով արտաքսված Փոքր-Ասիայի խորքը, որի ճանապարհին մեռնում են հազարներով: Թիւրքիայի աւստրօ-գերմանական կառավարիչները սահմանափակվում են միայն նրանով, որ փրկում են Կ. Պոլսի հայ բնակիչների կեանքն ու գոյքը:

◆ Ռուսական նաւերը Սև ծովում հանդիպեցին ձկնորսական մի նաւակի, որի մէջ կային թիւրքական 16 դասալիք յոյն զինւորներ: Նրանք փախել էին Սամսոնի մօտի Ֆացից: Դրանք վերցվել են ռուսաց նաւի վրա: Յոյները պատմել են, թէ ինչպէս գազանութիւններ են գործ դնում թիւրքերը հայերի վերաբերմամբ: Սիստեմատիկ կոտորածը բռնել է վեց վիլայէթը, դրանց թւում և Տրապիզոնը և Էրզրումը: Թիւրքերը կենդանի թողնում են միայն նրանց, ովքեր ցանկութիւն են յայտնել մուսուլմանութիւն ընդունելու:

◆ Յոյն փախստականների ասելով, թիւրք իշխանութիւնները Անատոլիայում ձեռք են առնում խստիւ միջոցներ յոյն ազգաբնակութեանը վախեցնելու և փախստականների առաջն առնելու նպատակով:

◆ Մի քանի օրվայ մէջ Ֆացից փախել են 200 յոյն, որոնց մէջ եղել են շատ զինւորականներ: Փախուստը անդադար է եղել: Մեծամասնութիւնը բռնվել է սահմանապահ պահակի ձեռքով և գնդակահարվել:

◆ Բուլգարիայի հետ կապած պայմանագրի ույժով, Թիւրքիան պարտաւոր է քանդել Մարիցայի աջ ափում կառուցված բերդերն ու ամրութիւնները: Այժմ թիւրքերը հանում և Գալիպոլի են ուղարկում բերդերի թնդանօթները:

◆ Անգլիական մի ռազմանաւ կարողացել է մտնել Բալտիկ ծովը:

◆ «Р. Ут.» հաղորդում են, որ բուլղարները արդէն գրաւել են Թիւրքիայի զիջած հողերը:

◆ Սև-ծովում երևան հանեցին թշնամու 3 սուզանաւ:

ԹՈՒՐՔԻԱՆ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ

Աթէնքից հաղորդում են որ, Էնվէր փաշան չէզոք պետութեան մի դեսպանի հետ ունեցած տեսակցութեան ժամանակ, դեսպանը զգուշացրել է, որ քրիստոնեաների հալածանքը վատ քաղաքականութիւն է: Ի պատասխանի Էնվէր փաշան, իրան յատուկ խրոխտութեամբ, բացագանչել է.

— Այսուհետև մեր քաղաքականութիւնը պիտի լինի «Թիւրքիան թիւրքերի համար»: Սկսել ենք ազատվել նախ հայերից, յետոյ յոյներից, և ամենավերջն էլ հրէաներից: Նրանից յետոյ հերթը կը հասնի օտարահպատակներին, որոնք շատ ամուր են տեղ դրել Թիւրքիայում, նոյնիսկ չը պիտի խնայենք գերմանացիներին:

Էնվէրի այս յայտարարութիւնը ապշեցուցիչ տպաւորութիւն է թողել Կ. Պոլսի դիւանագիտական շրջանում:

(«Daily News»)

ՄԻ ԷՋ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

II

1839 թւին, սուլթան Մահմուդի մահից յետոյ, երբ մինիստր Խոսրովը քիւրդերի հետ վերջացրեց իր հաշիւը՝ ընկճելով նըրանց, պատերազմ յայտարարեց Եգիպտոսի դէմ: Սակայն եգիպտական զօրքերը, վերցնելով ամբողջ Փոքր-Ասիան, դիմեցին Պոլսի վրա. այս ճգնաժամին Անգլիան էր որ ստիպեց եգիպտական զօրքերին թողնել Սիրիան, փրկելով սուլթանին գահընկէցութեան վերահաս վտանգից: Ի վարձատրութիւն դրան սուլթանը 1841 թւին Ջրերի մասին տեղի ունեցած կոնվենցիայով արգելեց առ հասարակ բոլոր եւրոպական պետութիւնների պատերազմական նաւատորմի մուտքը ջըրերը, ինչպէս և Ռուսաստանի: Այսպիսով Անգլիան ետ մղեց Ռուսաստանին Կ. Պոլսից, իսկ Ռաշիդ-փաշան որպէս անգլոֆիլ և սահմանադրական՝ իր Թանզիմաթով 1839 թ. միանգամայն նսեմացնել էր ուզում ռուսական հմայքը Թիւրքիայի քրիստոնեաների աչքում: Սակայն Թանզիմաթը մնաց մեռած տառ, և քրիստոնեայ ժողովուրդների վիճակը մազաչափ անգամ չը փոխվեց. մինչև անգամ մռայլութեան էր մատնվել նա, երբ վրա հասաւ Ղրիմի պատերազմի շրջանը: Երբ եւրոպական պետութիւնները իրանց ներքին գործերը կարգադրելուց յետոյ վերստին Արևելք յառեցին իրանց հայեացքը, նրանք չափազանց դժգոհ մնացին գործերի այն ընթացքից, որ ստեղծվել էր Եւրոպայի ներքին խառնակութեան ժամանակ Բալկաններում. Նրանց դժգոհութեան աղբիւրը Ռուսաստանի ազդեցութեան ուժեղացումն էր Կ. Պոլսում և Թիւրքիայի հպատակ քրիստոնեայ ժողովուրդների մէջ: Այդ պատճառով 3 խոշոր պետութիւնները—Անգլիա, Ֆրանսիա և Աւստրիա—միաբանած՝ դուրս եկան Ռուսաստանի դէմ Ղրիմի պատերազմով: Մենք տեսնում ենք, որ 3 մեծ պետութիւններն այստեղ ևս չեն բաւականանում Ռուսաստանին պատերազմով հարւածելով. Նրանց համար ամենից կարևորն էր՝ իրանց քաղաքական ու տնտեսական շահերը պահպանելու համար՝ Թիւրքիայի հպատակ քրիստոնեայ ժողովուրդների համակրութիւնն ու հաւատքը վայելել: Ինչպէս մի եւրոպացի հեղինակ է ասում, որքան որ Թիւրքիայի քրիստոնեաներին թև են տալիս եւրոպական պետութիւնները, նոյնքան էլ քրիստոնեայ ժողովուրդները Թիւրքիայում նրանց համար պատւանդան են կազմում իրանց քաղաքական նպատակների համար. համարեա նոյն կերպ է ձևակերպում 1882 թ. «Рус. Мысль»-ի թղթակիցը. «Մի օմն ասում էր, թէ Ռուսաստանը օգտակար է սլաւոնների համար հէնց նրանով, որ գոյութիւն ունի»: «Որպէսզի այդ միտքը լրիւ արտայայտվի իր ամբողջ ծաւալով, պէտք է աւելացնել դրան,—շարունակում է նա,—որ սլաւոնները նոյնպէս օգտակար են Ռուսաստանի համար և բազում ծառայութիւն են մատուցել Ռուսիային հէնց միայն նրանով, որ նրանք գոյութիւն ունեն»: Աւստրիան, որ մինչ այդ հակասլաւոնական քաղաքականութիւն ունէր, 1851 թւի Բոսնիա-Հերցեգովինայի ապստամբութեան ժամանակ, Թիւրքիայի դէմ, Օմար-փաշայի արշաւանքից փրկեց Չերնոգորիային, որը Բոսնիային օգնութիւն էր ցոյց տալիս Թիւրքիայի դէմ: Աւստրիան չափազանց անյարմար էր զգում իրան Բալկաններում ռուսական խոշոր ազդեցութեան դէմ, ուստի նոր քաղաքականութեան կուրսի է դիմում. Նա սլաւոնների համակրութիւնը թեքելու համար էր կողմ՝ մի խիստ վերջնագիր է ներկայացնում սուլթանին, բողոքելով Թիւրքական էքսպեդիցիայի դէմ Չերնոգորիայում, և պահանջում էր կանչել Օմար-փաշայի զօրքերը՝ ճանաչելով Չերնոգորիայի անկախութիւնը. այդ վերջնագրին միանում են Անգլիան ու Ֆրանսիան, ի հարկէ դարձեալ նոյն նկատառումներով:

Այդ ժամանակ էր, որ Ֆրանսիան ու Անգլիան վերջնական նպատակ էին դրել իրանց համար և Թիւրքիայում քաղաքական ազդեցութեան պատւանդան ստեղծելու Թիւրքիայի հպատակ ժողովուրդների մէջ: Պէտք է նկատել, որ եւրոպական պետութիւնները առաջին շրջանում կրօնական խնդիրների պատրւակի տակ մեծապէս օգտվել են Թիւրքիայի քրիստոնէական համայնքների կրօնական խնդիրներից՝ նրանց միջոցով իրանց համար ազդեցութեան շրջաններ ստեղծելու. կրօնական խնդիրների շուրջը եղած այն հակամարտութիւնները, որոնք տեղի ունէին Թիւրքիայում, մեծ պետութիւնների մէջ ակնյայտնի են դարձնում այդ խնդիրը: Ինչպէս որ 12 միլիոն սլաւոնների գոյութիւնը Թիւրքիայում ռուսական ազդեցութեան տարածման մեծ պայման էր Թիւրքիայի պէս բարբարոս երկրում, որից մեծապէս օգտվում էր ռուսական դիպլոմատիան, այնպէս էլ Ֆրանսիան, Անգլիան ու Աւստրիան խոշոր չափով սկսում են օգտվել կրօնական դաւանաբանական խնդիրներից: Հայ եկեղեցու ծոցում առաջացած հերձուածների կռիւն ու հալածանքները նրանց դէմ լուսաւորչական եկեղեցու կողմից՝ չափազանց ուսանելի են այդ տեսակէտից: Այդ հալածանքները սկսվում են 1828 թւին նախ հայ-կաթոլիկների դէմ և ապա 1845 թւին հայ-բողոքականների դէմ. Սակայն հետաքրքրականն այստեղ նախ այն է, որ հայ-լուսաւորչական եկեղեցին ապաւինած սուլթանի կառավարութեան՝ կարողանում է հալածանք սկսել Ֆրանսիային և Անգլիային ապաւինած երկու համայնքների դէմ, և երկրորդ՝ որ սուլթանի կառավարութիւնը հալածելով այդ երկու համայնքներին՝ պաշտպան է հանդիսանում հայ առաքելական եկեղեցու շահերին: Արդ՝ ինչով բացատրել կազուսը:

«Բ. Դուռը երբէք չը պէտք է թոյլ տայ,—ասում է Ֆուադ փաշան,—այն խնդիրներին, որոնք նպատակ ունեն միացնել հայերին ուղղափառ եկեղեցուն» (Политич. завѣщаніе Фуадъ паши, «Рус. Мысль», 1896 г. №XI). Դրա հետ միասին՝ սուլթանի կառավարութիւնը շահագրգռված էր նոյնպէս նրա մէջ, որ հայ եկեղեցու ծոցում կաթոլիկ ու բողոքական հերձուածներ չառաջանան, որ ֆրանսիական ու անգլիական կառավարութիւնների համար միջամտութեան և ազդեցութեան հնարաւորութիւնը նւազի. այս հիմնական սկզբունքով էր ղեկավարվում սուլթանի կառավարութիւնը, երբ 1828 թ. սուլթանական իրադէով հրաման տրվեց Կ. Պոլսի լուսաւորչական հայոց պատրիարքին հալածել կաթոլիկ հայերին, որն իրագործեց պատրիարքը ամենախիստ ձևերով:

Սուլթանի կառավարութեան քաղաքականութիւնը այսպիսով հայ առաքելական եկեղեցու պաշտպանութիւնը չէր, այլ հարւած հասցնելը ֆրանսիական դիպլոմատիային Թիւրքիայում. դրան ապացոյց է և այն, որ հալածանքը միայն չէր սահմանափակվում հայ կաթոլիկներով, այլ նա միաժամանակ ֆրանսիացիների դէմ էր. «1828 թւին,—գրում է Ռօզէն,—Բ. Դուռը գրաւեց Զմիւռնիայում ֆրանսիական վաճառականներին պատկանող ցորենի խոշոր ամբարները» (Розенъ. «Истор. Турціи» եր. 67): Դա այն ժամանակ էր, երբ Եգիպտոսի ապստամբութեան խնդրի առիթով Թիւրքիան խիստ գրգռված էր Ֆրանսիայի դէմ և իր վրէժը լուծում էր կաթոլիկ հայերից. Նոյնպիսի հալածանք սկսվեց նաև 1845 թւին հայ բողոքական համայնքի դէմ. սակայն այս հալածանքի մէջ մեծ դեր է խաղացել, սուլթանի կառավարութիւնից բացի, ռուս դիպլոմատիան. «Փոքր առ փոքր նոր համայնքը (բողոքական) այնպէս տարածվեց, որ ինչպէս արևելեան եկեղեցու, նոյնպէս և հայ լուսաւորչական եկեղեցու հովանաւորող համարվող ռուսական կառավարութիւնը կասկածանքով սկսեց նայել նրա զարգացման վրա. Նա դրա մէջ իր ազդեցութեան համար վտանգաւոր տարր էր տեսնում, որին նախօրօք պիտի հականերգործել. այդ առիթով Պետրոգրադի ներշնչմամբ 1845 թւին հետևեց կաթողիկոսի հրամանը էջմիածնից Կ. Պոլսի պատրիարքին՝ ամեն կերպ ճնշել հայ ժողովրդի մէջ մտած բողոքականութիւնը» (Розенъ. «Истор. Турціи» ст. 100): Պարզ է, որ այդ կրօնական շարժումների մէջ եղած մեծ խնդրումը միանգամայն պարզվում է որպէս եւրոպական պետութիւնների և սուլթանի կառավարութեան քաղաքականութեան արդիւնք։ Սակայն հարց է ծագում, թէ ինչու միայն այդ շրջանում է, որ սուր կերպարանք են ընդունում կրօնական վէճերը. Նախ այն պատճառով, որ 50-ական թւականներից թէ հայ-կաթոլիկները և թէ հայ-բողոքականները համայնքը իրաւունք է ստանում անջատվելու լուսաւորչական եկեղեցուց որպէս ինքնուրոյն համայնքներ, որ կատարեալ ազատութիւն են վայելում։ Եւ երկրորդ, որ եւրոպական դիպլոմատիայի միջամտութեան առիթները բոլորովին այլ կենտրոններ էին տեղափոխվել, շնորհիւ նրա, որ հէնց հայ լուսաւորչական եկեղեցու ծոցում առաջ էին եկել կուսակցութիւններ, ինչպէս անգլոֆիլներ, ռուսոֆիլներ, գերմանոֆիլներ։ Ներսէս Վարժապետեանը անգլոֆիլ էր, իսկ Նար-Պէյն ու Խրիմեանը ռուսոֆիլներ էին. ազդեցութեան շրջաններ ստեղծելու կենտրոններ էին դարձել սահմանադրական լուսաւորչականներն ու (1867 թ.) ինքնավարութեան խնդիրը. առաջինի կողմնակիցն էր Անգլիան, իսկ երկրորդինը Ռուսաստանը։

Մոսկվա Ա. Մել-Աղալ.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ՝ ԳԵՐԱԳՈՅՆ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Օգոստոսի 24-ին Նորին Կայսերական Մեծութիւնը ուղարկեց հետեւեալ հեռագիրները, բացի Ֆրանսիական հանրապետութեան նախագահին ուղարկվածից.

Անգլիական թագաւորին.

Իմ երկրի ապրած այս լուրջ ժամանակ Ես վճռեցի Իմ ձեռքն առնել Իմ զօրքերին առաջնորդելու գործը։ Յայտնելով ձեզ այդ մասին, Ես կրկին արտայայտում եմ Իմ համոզմունքը, թէ Աստուծոյ ողորմութեամբ դաշնակիցների միացեալ ջանքերով նրանց վերջնական յաղթութիւնը կը պսակէ այս արիւնահեղ պատերազմը։

Իտալական թագաւորին.

Կանգնելով այսօր Իմ զօրքերի գլուխ, Ես արտայայտում եմ ձերդ մեծութեանը ամենաանկեղծ բարեմաղթութիւններ և յայտնում եմ Իմ խորին համոզմունքը, թէ Մեր դաշնակից երկրների փոխադարձ ջանքերը ամեն օր մօտեցնում են վերջնական մեծ յաղթութեան.

Բելգիական թագաւորին.

Այսօր ստանձնելով Իմ զօրքերի հրամանատարութիւնը, Ես գոհունակութեամբ դիմում եմ ձերդ մեծութեանը, արտայայտելով ամենասրտագին ցանկութիւններ ձերդ մեծութեանը և ձեր վեհանձն ու հերոս զօրքին։

Սերբիական թագաւորին.

Իմ զօրքերի գլուխ կանգնելու օրը Ես դիմում եմ ձերդ մեծութեան և քաջարի սերբերին, ցանկանալով ամենաբուռն կերպով բարգաւաճութիւն և աջողութիւն սերբ հերոս ազգին և նրա պանծալի զօրքին։

Չերնոգորական թագաւորին.

Այսօր ստանձնելով Իմ զօրքերի ղեկավարութիւնը, Ես դիմում եմ ձերդ մեծութեան, ցանկանալով ամբողջ սրտից ձերդ մեծութեան երկրին բարգաւաճութիւն և ձեր զէնքին փառք։

Ճապօնական կայսրին.

Շտապում եմ տեղեկացնել ձերդ մեծութեանը, որ Ես այսօր ստանձնեցի Իմ զօրքերի գերագոյն զօրահրամանատարութիւնը։ Այդ առիթով դիմում եմ ձերդ մեծութեան ամենասրտագին բարեմաղթութիւններով, ցանկանալով հզօրութիւն ձեր կայսրութեան և փառք քաջարի ճապօն զօրքին։

Յիշեալ հեռագիրներին ստացվեցին համապատասխան բովանդակութեամբ հեռագիրներ անգլիական, իտալական, սերբիական, չերնօգորական, բելգիական թագաւորներից և ճապօնական կայսրից։

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Գերմանացիների արշաւը Ֆրիկստէրն Սաուկէն լճերի շրջաններում և Բակիշկի գիւղի մօտ՝ Եակոբշտադտ-Դվինսկ զօրագծից դէպի արեւմուտք՝ շարունակվում է։ Պօդբրոձէ երկաթուղային կայարանի շրջանում, հակառակորդի քանիցս գործած յարձակումները վանվեցին։ Պօդբրոձէից դէպի արեւմուտք գերմանացիք Մէյշագոլի շրջանում յարձակումները գործում են մեծ եռանդով. Օրանի մօտից սկսած և մինչև Կոսովա գիւղը շարունակվող զօրաճակատի վրա թշնամին առաջանում է դէպի արեւելք։ Աւելի լուրջ կռիւներ տեղի ունեցան Մոստի և Օզերնիցա գիւղերի շրջանում՝ Սլոնիմից դէպի արեւմուտք։

Պինա գետից դէպի հարաւ հակառակորդի հեծելազօրը ետ քշվեց դէպի Տուրի և Պրիպեատ գետերի շրջանը։ Դերժանոյի շրջանում մեր զօրքերն աջողութեամբ անցան Փորին գետը և կռւով առաջացան, գերելով աւստրիական մի գումարտակ ամբողջ կազմով։

Դերժանո և Կլէվան շրջաններում հակառակորդը դիմում էր առաջխաղացման, բայց մենք դիմադրեցինք։ Յետոյ մեր զօրքերը խիզախ հակայարձակումով առաջացան Կլէվանի արեւմտեան ուղղութեամբ, ուր Օլէշվա գիւղի մօտ կռւի մէջ ձեռք ձգեցին աւելի քան 1300 գերի։

Օգոստ. 31-ին մեր զօրքերը Վիշնեվէց քաղաքից դէպի արեւմուտք վանեցին թշնամուն Բիզոմէլ գիւղի միջից և նրա շրջակայքից։ Հակառակորդն այստեղ շտապով նահանջում է և յետոյ խոշոր կորուստներով քշվեց Բոստոկի գիւղից։ Առ այժմ ունեցած տեղեկութիւնների համաձայն, գերիների թիւը հասնում է 20 օֆիցերի և 2000 զինւորի։ Հակառակորդը փորձեց հակայարձակում գործել Պոնտովա և Դիտկովցա գիւղերի մօտ, բայց անաջող։ Այստեղ նոյնպէս մենք վերցրինք մօտ 140 օֆիցեր և 7300 զինւոր, ձեռք ձգեցինք մի մեծ և 6 փոքր թնդանօթ, 4 արկղ ռազմամթերք, 6 գնդացիր և այլ ռազմական իրեր։

Գալիցիայում Սերէտ գետի զօրաճակատից դէպի արեւմուտք նահանջող թշնամուն հետապնդելիս տեղի ունեցան մի քանի տաք կռիւներ Գլեսաերի, Ցէբրով, Իւզէֆովկա գիւղերի շրջաններում, Տարնոպոլից դէպի արեւմուտք և Դվինեան գիւղի մօտ՝ Զալէշչիկովի շրջանում։ Իւզէֆովկայի մօտ տեղի ունեցած կռիւներում մենք օգ. 30-ին ձեռք ձգեցինք աւելի քան 2700 զինւոր 35 օֆիցերի հետ և 4 գնդացիր։ Իսկ օգ. 17—30 գերի վերցրած աւստրիացիների և գերմանացիների թիւը կազմում է աւելի քան 40,000 մարդ։

Սև ծովում, քարածուխային շրջանում, մեր ականանաւերը ոչնչացրին մի մեծ շոգենաւ։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Գալիցիայում ռուսների շարժումները առաջ են բերում Գերմանիայի ազգաբնակութեան մէջ անհանգստութիւն։ Պաշտօնական լրագիրները աշխատում են գործը ներկայացնել այնպէս, թէ իբր ռուսների առաջխաղացումը ունի ոչ այնքան ռազմական, որքան քաղաքական պատճառ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 սեպտեմբերի

ՓԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտուայի զօրաճակատում առաջվայ նման թնդանօթային կռիւ էր։ Սոմմայից դէպի հարաւ թնդանօթային կռիւը առանձնապէս ուժեղ է Լիբէսսիէրի, Տիլլոայի և Բեվրէն շրջակայքում. թնդանօթային կռիւ է նաև էն գետը Մառնայի հետ միացնող ջրանցքի մօտ և Արգոնի անտառում։ Մորմարի անտառում մեր հրետանիները լռեցրին թշնամու գնդակացիրներին։ Գիշերը խաղաղ անցաւ։

Մեր օդագնացները ռմբակոծեցին Բէնդորֆ կայարանը՝ Մոնարժի մօտ և Շատէլ-Անտրդոնում ու Լանդլմարկում բանակված թշնամու զօրքերին։

ԼՈՆԴՈՆ.—Ծովակալութիւնը յայտնում է, որ թշնամու մի աէրօպլան թռիչք կատարեց դէպի Կենտի ծովափը, նետելով մի քանի ռումբ, որոնցից փլվեց մի տուն և վիրաւորվեցին 4 մարդ։ Աէրօպլանը ստիպված էր անհետանալ անգլիական երկու աէրօպլանների յարձակման պատճառով։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 սեպտեմբերի

ՀՌՕՄ.—Իտալական կառավարութիւնը աւելացնում է իր զօրքի քանակը և տենդային կերպով շարունակում է զէնք ու ձմեռային հագուստ պատրաստելու աշխատանքները։

Գլխաւոր բանակը տեղեկացնում է.

Արսէբրիոյից դէպի հիւսիս-արեւմուտք թշնամու թնդանօթային վաշտերը եռանդուն կրակ բացին Մոնտէ-Մառոնիայի մեր դիրքերի դէմ, չը դադարեցնելով կրակը լոյս օգ. 31-ի գիշերը և ոչ մի հետեանքի չը հասնելով։ Այդ գիշերվայ ընթացքում թշնամին մի շարք յարձակումների ձեռնարկեց Րիէնցի հովտի վերին մասում մեր դիրքերի դէմ, բայց յարձակումները վանվեցին։ Իզոնցոյի վերին մասում մեր զօրքերը յարձակում գործեցին թշնամու ձեռքում գտնվող ուժեղ դիրքերի վրա Պլէցցոյի շրջանում և հասան խոշոր հետեանքների, չը նայած տեղի աննպաստ պայմաններին և թշնամու կատաղի դիմադրութեան։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 սեպտեմբերի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Վերջին օրերը լուրեր են տարածվում զօրահանութեան և աւստրո-ունգարական սահմանը զօրքեր ուղարկելու մասին։ Պաշտօնական հաղորդագրութիւնն ասում է, որ այդ լուրերը տարածում են չարամիտ մարդիկ։ Իրողութիւնն այն է, որ զօրքերը իրանց սովորական զօրաշարժումներն են կատարում, ուստի և ոչ մի հիմք չը կայ անհանգստանալու։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մատակարարական գործի միջվարչական խորհրդակցութիւնը հնարաւոր գտաւ տալ գումարներ փոխարինաբար պատերազմական ժամանակի արտակարգ միջոցներից՝ Բաթումի և Կարսի շրջանների ազգաբնակութեան քայքայված տնտեսութիւնը վերականգնելու համար։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—«Օրէնքների ժողովածուի մէջ» հրատարակված է մի օրէնք փախստականների կարիքները ապահովելու մասին։

Ստատս-սեկրէտար Կրիվօշէյնի նախագահութեամբ տեղի ունեցաւ այն առանձին խորհրդակցութեան նիստը, որ միացնելու է մատակարարական գործի ձեռնարկութիւնները։ Խորհրդակցութիւնը ընտրեց երեք մասնաժողով, մինը զօրքին հաց ու փուրաժ հայթայթելու համար, երկրորդը զօրքին միս մատակարարելու համար և երրորդը թանգութեան դէմ մաքառելու համար։ Ապա խորհրդակցութիւնն զբաղվեց փախստականներին ուտելիք ապահովելու խնդրով։ Կրիվօշէյնն առաջարկեց պատշաճ վարչական կառավարիչներին՝ բաց թողնել փախստականներին խնամող կազմակերպութիւններին անհրաժեշտ քանակութեամբ փայտեր՝ բարակներ կառուցանելու և վառելիքի համար կիսագին։

Մեծ-բրիտանական դեսպանը յանձնեց Կայսրուհի Ալէքսանդրա Թէօդորովնային 135,750 ռուբլի, որպիսի գումարը կազմում է Անգլիայում՝ «Ռուսաց դրօշակի օրը» հանգանակված գումարների երկրորդ նուագը. այդ հանգանակութիւնից ընդամենը ստացվել է 235,750 ռուբլի։

Ամերիկայի կիրակնօրեայ դպրոցների սաները դեռ յուլիսին Գահաժառանգի տրամադրութեան տակ էին դրել անգլիական պատուէրի միջոցով գործող բանակն ուղարկելու համար 15,000 աւետարան ռուսերէն լեզուով։ Այժմ միևնոյն սաները նորից ուղարկել են Գահաժառանգին 10,025 աւետարան, որոնք և Կայսրուհու թոյլտւութեամբ կուղարկվեն նոյնպէս գործող բանակը։

Պետական Խորհուրդը Կուլօմզինի նախագահութեամբ լսեց պետական քարտուղարի կարդացած օրէնսգիծը փախստականների կարիքներն ապահովելու մասին, որպիսի օրէնսգիծն արժանացաւ Բարձրագոյն հաստատութեան. Խորհուրդն ընտրեց փախստականներին տեղաւորող առանձին յանձնաժողովի անդամներ Կարպաչեվին, Կոնիին, Լիկոշինին, Սկիրմունտին, Շիլինգին, Էնգէլգարդին և Երխառովին։

ՍՕՖԻԱ.—Այսօր արձակվեցին 1912 թ. ծառայութեան կանչված զօրքերը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Պարսկական միսիան յայտնում է, որ պարսից կառավարութիւնն ամեն հնարաւորն անում է, որպէսզի պահպանէ իր չէզոքութիւնը և վերջ դնի յուզմունքներին Հարաւային Պարսկաստանում։

Րէյտէրի գործակալութիւնը տեղեկացել է, որ ներկայումս դրութիւնը Պարսկաստանում մի փոքր լաւացել է։ Կառավարութիւնը երաշխիքներ է տալիս՝ թէ կարգուկանոն ու ապահովութիւնը կը վերականգնվի։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Րեչ»-ը ասում է, որ թշնամին Դվինսկի և Վիլնայի միջև եղած երկաթուղին անցնելու պատճառով, մենք ետ եկանք Պօդբրօձէ կայարանը, Վիլնայից 49 վերստ դէպի հիւսիս-արեւելք։ Թշնամու առաջխաղացումը՝ լայն զօրաճակատով՝ խանգարում են լճերը, որոնք գտնվում են Դվինսկ-Վիլնա երկաթուղագծի մօտ։

◆ Օգոստոսի 31-ին զինւորական ծովային յանձնաժողովը քննեց մի շարք հարցեր, որ կապ ունեն Դարդանէլի բացման հետ։

◆ Բուլգարիայում ամուր հիմքերի վրա է դրված աւստրո-գերմանական ագիտացիան։ Թիւրք-բուլգարական համաձայնունից յետոյ կասկած չէ մնում, որ Բուլգարիան ամբողջովին գտնվում է դաշնակիցների թշնամիների ուժեղ ձեռքում։ Նախագծված է կազմել աւստրո-գերմանական բուլգարական համաձայնութիւն Ռումինիայի դէմ գործելու համար։

◆ Աւստրո-գերմանական զօրքերի թիւը, որոնք ցոյցի նպատակով ուղարկված են ռումինական սահմանը, կազմում են 5 կորպուս։

◆ Լոնդոնում այն առանձին մասնաժողովը, որին յանձնված էր քննել անգլիական զօրքի հարցը, աւարտեց իր աշխատանքը։ Անդամներից 4-ը կողմնակից եղան մտցնելու պարտադիր զինւորական ծառայութիւն։ 5-րդ անդամը՝ բանւորների ներկայացուցիչը դէմ խօսեց։ Նախագահ Լորդ Կրիւն բռնեց միջին տեղը։ Վերջնական վճիռ կը կայացվի պարլամենտը գումարելուց յետոյ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

(Սեփական հեռ.)

Ջուլֆա, 1 սեպտ.

Վանից երկրորդ անգամ հեռանալը ստիպեց նոր վերադարձած հայերին դիմել Խոշաբի վրայով դէպի Սալմաստ։ Նրանց թիւն է 2000 հոգի։

Աղբակում կային 8500 հոգի, Սալմաստում՝ 2000, ընդամենը 10,500։

Մի ամսվայ ընթացքում քիւրդերը Սարայում . . . (պակասում է)։

600 հոգի մեռել են փորհարինքից և խոլերայից. հիւանդների թիւը հասնում է 800-ի։ Ամեն օր մահանում են 60—80 հոգի։

Չափազանց անհրաժեշտ է բանալ սննդատու կայաններ գոնէ հիւանդների համար։

Ներսէս եպիսկոպոս

Երէկ առաւօտեան գնացքով 1500 փախստական հայեր եկան Էջմիածնից Թիֆլիսի կայարանը, որտեղից պիտի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՍՄԱՆ ԲԱԲԱ *)

V

— Հաջի Օսման Բաբա,—գլխին խփելով ներս մտաւ մի օր, ձեռքերի նոյնիսկ եղունգներն էլ կապոյտ գոյնով ներկած, ներկարար Հէյդարը.—բէկ երեկոյեան արհեստանոցից տուն վերադարձայ և ինչ տեսնեմ, ծերութեան օրերիս միակ իմ մխիթարութիւն, գեղանի երիտասարդ կինս, Գիւլչէնէթը, տուն ու տեղս թողել է և երիտասարդ նաւավար Մահմուդի հետ փախել։

— Էյ կործանւած մարդ, կինարմատ ասածդ էլ ինչ մի մեծ բան է, որ նրա մասին սուգ ես անում։ Այս բոպէիս գնա, քեզ նման մի քանի խելօք կտրիճներ հաւաքի՛ր, գնացէք-յարձակվեցէք հայ գիւղերի վրա և մէկի փոխարէն տասը գեղեցկուհիներ փախցրէք, պրծաւ գնաց։

Հէյդարը հեռացաւ այդ վճիռը լսելով. նա ոգեւորվեց և, երիտասարդութիւնը վերադարձած զգալով, գլուխ տուեց, որ հեռանայ։

— Լսի՛ր, Հէյդար, — ասաց Օսման Բաբան,—չը մոռանաս և իմ բաժինը։

Նրանք քրքջացին։

Հէյդարը գնաց և կատարեց Օսման Բաբայի վճիռը։

VI

— Հաջի Օսման Բաբա, Ալլահը հաստատ պահէ քեզ քո իրաւունքի մէջ,—մի օր ներս գալով, ասաց նրան մի գանգատաւոր։

— Ինշալլահ, ամէն,—ասաց Օսման Բաբան և աւելացրեց.—ասա տեսնեմ, ինչ ես կամենում, ով քաղաքավարի, ազնիւ մարդ։

— Ուզածս մի արդար դատաստան է։ . .

. . . .

— Իսկ ինչ էր քո մեղը,—ցաւակցաբար հարցրեց Օսման Բաբան։

— Իմ մեղը միայն այն է, որ ես քո մի խեղճ, հաւատարիմ հպատակ, չարքաշ, վաստակաւոր մի հայ եմ։

Վերջին երկու բառից բարի Օսման Բաբան ցնցվեց. յետոյ ժողովելով իր բոլոր ոյժը՝ ահեղ ձայնով կանչեց.

— Մուստաֆա...

Դրսից շունչը կտրված ներս վազեց ներքինապետը։

— Ո՞վ է համարձակվել ներս թողնել այս մուրտառ անհաւատին, որ գար այդպիսի ինքնահնար սուտեր փչէր իմ ականջի։

— Բայց ես վկաներ ունեմ, տէր,—փորձեց ասել գանգատաւորը։

— Ովքե՞ր էն քո վկաները, պիղծ էրմէնի։

— Իմ հարեւան բոլոր հայերը, որոնք նոյնպէս իմ վիճակին են ենթարկվել։

— Բայց աշխարհի սկզբից մինչև այժմ հայ բերնից ո՞վ է մի ճշմարիտ բառ լսել. Լսե՞լ ես, Մուստաֆա։

— Աստաֆուրուլլա, տէր (քաւ լիցի)։ Այդ գեավուրները միայն մի բան գիտեն, տեղի անտեղի մեր սուրբ կրօնը յիշոց տալ... մեր հաւատը անարգել։

— Դուրս,—աղաղակեց հաջի Օսման Բաբան։—Տուգանել այդ անզգամին մուսլիմանների վրա չարախօսելու համար տասը ոսկի. իսկ եթէ չի կարող վճարել, բանտ նստեցնել և այնտեղ քաղցած ծարաւ սատկեցնել։ Ինչ վերաբերում է սրա վկաներին, իրանց սուտ ցուցմունքների համար տանջանքի ենթարկել և շղթայակապ բոլորին Աքքիա քշել։

Սուտախօս, անարդար հային բռնեցին, տարան, իսկ Օսման Բաբան շատ վաղուց լուացվել և նամազ կատարել, որ գեավուրի հետ խօսելով սուրբ անձը մուրտառվեց։

VII

Քանի ժամանակից յետոյ խեղճ Օսման Բաբայի վրա ինչ-որ տխրութիւն եկաւ։ Հպատակ հաւատացեալներն ամեն կերպ հնարներ էին գործադրում ուրախացնել նրան և երեսին ժպիտ բերել։

— Տէր իմ, տէր իմ,—մի օր ներս վազելով Օսման Բաբայի մօտ, կանչեց Մուստաֆան,—շուտ արա, շտապի՛ր, տես քո ծառաները քեզ զուարճացնելու համար ինչ հանդէս են սարքել։

Հաջի Օսման Բաբան մօտեցաւ պատուհանին։

Փողոցում բակ բռնած աղմկում էր ահագին ամբոխ։ Մէջտեղով գնում էր մի քոսոտ շուն։ Նրա ետևից միրուքը խճճանի մէջ գցած և թոկի ծայրը բռնած ման էին ածում մի ծերունազարդ քահանայի։ Սրա մօտով գնում էր մի սեփ-սև խափշիկ, որի ուսին գցած էր շուրջառ, իսկ ձեռին բռնած մի գիրք, որը որպէս թէ կարդում էր նա։ Սրանց առջև, ամեն տեսակ ծամածռութիւններ անելով գնում էր մի երկարամազ դերվիշ, որ տէրտէրական շապիկը հագել էր ոտքերը կաների մէջ անցրած և ուրարը փորին փաթթած, և խնձակօթը (այրված փայտը) թոկի ծայրին բուրվառ անելով։

Ի մեծ զուարճութիւն ամբոխի, այդ պատկերը հաջի Օսման Բաբային երեւի շատ դուր եկաւ, որովհետև նա սկսեց քահ-քահ ծիծաղել և չը թուլանալու համար փորը բռնեց և վազելով փռվեց զարդարուն, փափուկ թախտի վրա...

VIII

Անցան օրեր, տարիներ, և խեղճ հաջի Օսման Բաբան բոլորովին յոգնեց շատ արդար դատաստաններ անելուց։

Մի օր սպասաւորները եկան և յայտնեցին նրան, որ գեավուրները փողոց են ելել և ինչ-որ ցոյց են կատարում։

— Ի՞նչ է նրանց միտքը,—հարցրեց Օսման Բաբան։

— Մենք հայերս,—ասում են նրանք,—պահանջում ենք պատուի, ինչքի ապահովութիւն, մարդավարի կեանք։

— Լռեցրէք այդ անպիտաններին մահակներով։ Ցրիւ տուէք նրանց և հասկացրէք, որ նրանք մեր ստրուկներն են, այլ ոչ մարդ, որ մարդավարի կեանքի արժանի լինեն։

Նրա հրամանը կատարեցին ճշդութեամբ։

Շատերի գլուխը ջարդելով լռեցրին հէնց փողոցի մէջ իրանց արեան մէջ պառկեցնելով։

IX

Մի այլ անգամ Օսման Բաբային զեկուցին, որ հայերը զարթել են, խմբեր կազմակերպել, փողոցներում հրովարտակներ են տարածում, ամենքին ապստամբութեան են հրաւիրում և համարձակվում են ասել, որ այլևս համբերութեան բաժակը լցվել է, որ այլևս այդպիսի բռնութեան տանելը անհնարին է։ Նրանք մտադիր են զէնքի ոյժի դիմել, կոտորել մեզ մուսլիմաններիս, եթէ մենք չենք ցանկայ քրիստոնեայ դառնալ։

— Ջարդ, ջարդ, ջարդ,—աղաղակեց Օսման Բաբան։

Այդ օրից սկսած ամբողջ Հայաստանում արեան գետեր վազեցին. կոտորած, հրդեհ, առևանգութիւն, բռնաբարութիւն, սուր սովորական բաների կարգն անցան։

Այդ ամենի դէմ լուռ էր մարդը, լուռ էր երկիրը, լուռ էր և երկինքը։ Լաց էր ուժասպառ ժողովուրդը։ Ոչ ոքի մէջ այլևս ոյժ ու կարողութիւն չէր մնացել։

X

Մի առաւօտ զարհուրելի ահազանգի ձայներից փողոցները թափվեց սարսափահար ամբոխը։

Երկինքը շառագունել էր և արեան գոյն ստացել։ Ամենքի հայեացքները ուղղված էին վեր։ Ինչ էր պատրաստվում այնտեղ, ոչ ոք չէր կարողանում ըմբռնել. բայց ակներև էր, որ պատրաստվում էր ինչ-որ զարհուրելի բան։

Յանկարծ երկինքը ահեղագօր որոտաց, բարձրացաւ անասելի փոթորիկ... օդը լցվեց հեղձուցիչ հոտերով... Երկիրը սարսեց... անհամար նահատակների գերեզմանները բացվեցին և նրանց միջից ելան բռնաբարված կոյսեր, գլխատված հոգևորականներ, կենդանի թաղված կանայք, երիտասարդներ...

Նրանք ամենքը երգում էին՝ «Սուրբ, սուրբ, սուրբ»։

— Սուրբ, որ խօսեցիր վերջապէս։

— Սուրբ, որ մեր արեան ձայնը հասաւ Քեզ։

— Սուրբ, որ խօսեց Քո արդարութիւնը։

Սանդարամետը բացեց տարտարոսների բերանը, և Օսման Բաբան, որ սարսափահար աղօթքի էր չօքել, կլանվեց, խորտակվեց իր արբանեակներով։ Նրա արդար դատաստանին փոխարինեց երկնային արդարադատութիւնը։

Նա բերեց բազմաչարչար ժողովրդին անձկալի խաղաղութիւն։

Ալ. Աբէլեան

---

*) Տես «Մշակ» № 193.

գնային Դալեար։ Սակայն փոխադրականների մէջ հիւանդներ լինելով, գլխաւոր բժիշկը հնարաւոր չէ գտել ընդունել և որոշվել է ուղարկել նրանց Աղ-Թափլիա կայարանը։ 1500 փախստականներին ճանապարհին չէ տրվել սնունդ, սննդական կայաններ չը լինելու պատճառով։

—

Այսօր, Սաբուրթալօ ապաստարանում գտնվող, ինչպէս և Վանքի բակում գտնվող բոլոր փախստականները ուղարկվելու են Դալեար կայարանը։

—

Պարսկական Ջուլֆայի փոխ-հիւպատոսարանի կառավարիչ Նիկիտին հետեւեալ հեռագիրն է ուղարկել «Рус. Слово» թերթին. «Միայն ծայրայեղ անհրաժեշտութիւնը և այն վստահութիւնը, որ Մոսկվան արձագանք տուող է, իրաւունք են տալիս ինձ ձեր յարգելի թերթի միջոցով յայտնել ի գիտութիւն, որ իմ շրջանի սահմաններում գտնվում են մօտ 20,000 քրիստոնեաներ, որոնք բառի բուն մտքով կարիքի մէջ են, քաղցած, հիւանդ, իրանց ողջ կայքը կորցրած, և որոնք իրանց յոյսը դրել են միայն հաւատակից Ռուսաստանի վրա։ Ամեն տեսակ օգնութիւն՝ իրերով և դրամով, անչափ հարկաւոր է և անկեղծ երախտագիտութեան կարժանանայ»։

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

II

Երկար խորհելուց յետոյ ես եկայ այն եզրակացութեան, որ մեր առաւելութիւններն անգամ ոչ մի դրական լուծում չեն տուել բուն գործին։ Հայ թատրոնը հէնց իր սկզբնաւորութեան օրերին ունեցաւ մի Ադամեան, որը ապշեցրեց ամբողջ գեղարուեստական աշխարհը. սակայն դա մեր սիստեմատիկ զարգացող գործի արդիւնք չէր. եթէ կարելի է՝ ասել, դա բնութեան անհասկանալի խաղ էր, անժամանակ ծնունդ մեր թատրոնական աշխարհում։ Ադամեանն ուժեղ զարկ տալով մեր մանուկ թատրոնին՝ օգնեց, հմայեց հասարակութեան, սակայն նրա անցնելուն պէս մեզ զգացինք ողորմելի թշուառներ, աղքատներ, հազար ու մի այստեղ-այնտեղից հաւաքած ցնցոտիների մէջ փաթաթված։ Այո, եթէ մօտենանք գործին սուբեկտիվ հայեացքով, մենք կարող ենք հպարտանալ, որ ունեցել ենք այնպիսի մի Համլէտ, որ համարեա մրցակից չէ ունեցել համայն թատրոնական աշխարհում. բայց երբ գործին նայենք ընդհանուր տեսակէտով, կը համոզվենք, որ նման Համլէտը մեր թատրոնական աշխարհի լաբիրինթոսի մութ գաղտնի անցքերում կը կորչի անհետ, որովհետև դա մեր գործի ծնունդ չէ, այլ դա անպատահելի սոսկալի թռիչք է եղել։ Ադամեանը մտցրեց իր գործի մէջ անհատական ոյժի զօրութիւնը, և դա է պատճառը, որ երբ մեր իրականութեան մէջ երեւում է փոքր ի շատէ շնորհալի դերասան, անմիջապէս վերյիշում ենք Ադամեանին, ճգնում ենք նմանեցնել նրան և ապա յուսախաբ գլորում ենք այդ երիտասարդին անդունդ, քարկոծում, գուցէ և խեղդում անուանում, որովհետև մեր սոսկալի չափին նա չը յարմարվեց, եթէ կարելի է ասել՝ «Ադամեանական արշինին» չափին։ Մենք սպասում ենք Ադամեանին, բայց ոչ սիստեմատիկ զարգացող գործի արդիւնքին։ Ժամանակ է, որ մեր հասարակութիւնը մոռացութեան մատնէ «Ադամեան համեմատական չափը» և պահանջէ դերասաններից անխոնջ աշխատանք։ Անդուլ աշխատանքը միայն կարող է ծնել հերոսներ, և այնուհետև ոչ մի թռիչք մեզ ոչ կը շշմեցնի և ոչ էլ կը յուսախաբի։

Ժամանակ է թողնելու այդ հին հասկացողութիւնը՝ գործի աջողութիւնը որոնել անհատի ոյժի մէջ. ամենքը համահաւասար կերպով պատասխանատու պիտի լինեն գործի առաջ։ Հարկաւոր է վերջապէս դառնալ որոշ սկզբունք, այնպէս եթէ հարցնեն մեզ, թէ յո՞ երթանք, մենք պիտի պատասխանենք՝ «հրաշքի ենք սպասում», թէև լոյս աշխարհին այսօր յայտնի է, որ հրաշքների դարը վաղուց անցել է, հրաշքներով ոչ ոքի այլ ևս չենք զարմացնի։

Դրամատիկական Ընկերութեան գործունէութիւնը պէտք է համարել որպէս մաքուր գեղարուեստի բուն թարգմանիչ։ Սակայն դերասաններս ի՞նչ վերաբերմունք ենք ցոյց տալիս դէպի այդ հիմնարկութիւնը. դա մեր կուռածաղիկն է. իւրաքանչիւրը մեզանից աշխատում է դառնալ այդ հիմնարկութեան իշխողն ու տէրը. մեր դերասանների գլխաւոր զբաղեցնող առարկան այն է, թէ ո՞վ է լինելու այս տարի ռեժիսոր կամ գործին գլուխ անցած, որովհետև դրանից է կախված իմ՝ խմբում լինելը կամ չը լինելը. բայց որ չունենք մասնագէտ ռեժիսոր, դա մեր հոգը չէ. որ խումբ ենք կազմում առանց ռեպերտուարի, դա մեզ չէ անհանգստացնում. որ երկու օր մնացած ներկայացման՝ պիէս չունենք ընտրած, դա մեր գործը չէ. որ այս-այն դերասանների դերերից հրաժարվելը պիէսները այլանդակում է, որ հակառակորդ խմբին տապալելու համար դիմում ենք ոստիկանական միջոցների, դա մեզ չէ զարմացնում։ Մենք մեր անգործունէութեամբ հասել ենք անտարբերութեան, և իւրաքանչիւրը մեզանից—թէ նորեկը և թէ հինը—ձգնում է դառնալ առաջին լոկ նրա համար, որ իր հաշիւները մաքրէ բռունցքի ոյժով... Դաւեր, անվերջ մութ ու խուլ դաւեր... Այդ սոսկալի մթնոլորտից պէտք է ազատվել։ Թող մեծ լինի մեր դաւանած գործի սրբութիւնը և մենք ամենքս անխտիր չարքաշ մշակներ՝ գործի մեծութեան աստիճանների առաջ։ Թող հասարակութիւնը, թող պատմութիւնը ընտրէ մեզ համար արժանաւոր տեղեր այդ մաքրութեան աստիճանների վրա։ Թող մեր անհատական փառքի պսակները հիւսվեն գործին կեանք պարգեւող ազատ մրցման մէջ։ Այդ մրցումը ոյժեր կը ծնէ, որը ամենքին կոգևորէ, կապշեցնի. դա կը լինի արդար ծնունդ օրինաւոր գործի։ Այնուհետև կը տեղան և արդար պահանջներ. ամենքը սիրայօժար կերպով կը ձգեն լուման իրանց թէ մտաւոր և թէ հոգեկան աշխարհի սնունդ տուող արժանաւոր տուփի մէջ։

Այլապէս յանուն ո՞ր սկզբունքի պահանջ ենք դնում հասարակութեան առաջ. յանուն մեր քաօսային դրութեա՞ն, մեր կամայականութիւնների, մեր անգործունէութեա՞ն։ Այլ ևս անկարելի է և հարկաւոր չէ ազգասիրաբար «հօլա» տանելու սիստեմը շարունակել։ 50 տարի երգեցինք այդ երգը, և մինչեւ այսօր չեկաւ հասկացուցեց, որ մուրացկանութեամբ չենք կարող պահպանել մեր գոյութիւնը. Թողնենք մոնոպոլ վերաբերմունքը, մօտենանք մեր «հօր» ի սէր գործի, որի «Ջահերն ենք» անուանում մեզ, «սիւներ» և այլն...

Ուրեմն յանուն վեհ գաղափարի մոռանանք մեր մանր հաշիւները, համախմբվենք, կազմենք մի ընկերութիւն, «Հայ դերասանական միութիւն»։

Անջատ ոյժերով ոչինչ չենք կարող անել, բռունցքի հանդէպ բռունցքը երեւան կը գայ, մինչդեռ համերաշխութեան առաջ չի կանգնի և ոչ մի ամրոց։

Վերջացնելով խօսքս, առաջարկում եմ օգտվել առիթից, և սեպտ. 5-ին ոչ թէ զբաղվենք բացառապէս խմբի կազմակերպութեամբ, որը դարձեալ մեզ ոչ մի դրական հետեւանքի չի հասցնի, այլ կը լինի հին երգի շարունակութիւնը և գործը դարձեալ կը կաղայ, և գուցէ այս անգամ էլ աւելի, որովհետև մեր մեծ հարևանն ուժեղ է, ռուսաց թատրոնը անդադրում քայլերով առաջ է ընթանում, և շատ հաւանական է, եթէ մենք չը կազմակերպվենք՝ մեր կաղութիւնը ապագայում ուժեղ կերպով [illegible] կընկնի և սոսկալի ծիծաղելի դրութեան կը մատնենք մեզ՝ վիթխարի քայլերով առաջադիմող ապագայի հանդէպ։

Ամօ Խարազեան

ՊՐՕԳՐԷՍԻՎ ԲԼՕԿԻ ԾՐԱԳԻՐԸ

Պետ. Խորհրդի և Պետ. Դումայի ֆրակցիաների և խմբակների՝ ներքոյ ստորագրող ներկայացուցիչները, ելակէտ ընդունելով այն համոզմունքը, թէ ուժեղ, հաստատ և գործունեայ իշխանութիւնը միայն կարող է հայրենիքը հասցնել յաղթանակի և որ այդպիսին կարող է լինել միայն այն իշխանութիւնը, որը յենվելով ժողովրդի վստահութեան վրա՝ ընդունակ լինի կազմակերպել բոլոր քաղաքացիների՝ ակտիվ գործակցութեան համար,—միաձայն եկան այն եզրակացութեան, որ առաջնակարգ և կենսական խնդիրը՝ այդպիսի իշխանութիւն ստեղծելը՝ չի կարող իրագործվել առանց հետեւեալ պայմանների.

1) Ստեղծել միացեալ կառավարութիւն հասարակութեան վստահութիւնը վայելող անձնաւորութիւններից, որոնք համաձայնութեան կը գային օրէնսդրական հիմնարկութիւնների հետ որոշ ծրագրի շուրջը։

2) Վճռականապէս փոխել կառավարութեան գործունէութեան մինչև այժմ ընդունված ձևերը, որ չեն ներշնչված վստահութեամբ դէպի հասարակութեան ինքնագործունէութիւնը, մասնաւորապէս.

ա) Խստօրէն անց կացնել օրինականութեան սկզբունքը։

բ) Վերացնել թէ զինւորական, թէ քաղաքացիական իշխանութեան երկւութիւնը պատերազմական գործողութիւնների հետ կապ չունեցող խնդիրներում։

գ) Տեղական ադմինիստրացիայի կազմը փոխել։

դ) Խելացի և հետևողական քաղաքականութիւն վարել ներքին խաղաղութեան պահպանման, ինչպէս և ազգութիւնների և դասակարգերի համերաշխութեան համար։

Այսօրինակ քաղաքականութեան իրագործման համար պէտք է ձեռք առնել հետևեալ միջոցները, ինչպէս կառավարութեան կարգով, այնպէս և [illegible]։

1) Կայսերական ողորմածութեան ուժով դադարեցնել քրէական բնաւորութիւն չունեցող քաղաքական և կրօնական մեղադրանքների գործերը։

2) Ազատել պատժից արդէն դատապարտվածներին և վերականգնել նրանց իրաւունքները։

3) Մեղմացնել միւս քաղաքական և կրօնական յանցաւորների վիճակը, բացառութեամբ լրտեսների և մատնիչների։

4) Վերադարձնել քաղաքական և կրօնական գործերի համար աքսորվածներին։

5) Կատարելապէս դադարեցնել որևէ հալածանք հաւատի համար։ Վերացնել բոլոր այն շրջաբերականները, որոնք կրճատել և խեղաթիւրել են 1905 թվի ապրիլ 17-ի մանիֆեստը կրօնական համբերատարութեան մասին։

6) Ռուս-լեհական հարցի լուծումը, վերացում լեհացիների իրաւական սահմանափակումների։ Շտապով մշակել և մտցնել օրէնսդրական հիմնարկութիւնները Լեհաստանի աւտօնօմիայի օրինագիծը։ Վերաքննել լեհ կոլոնիզատորութեան վերաբերող օրէնքները։

7) Սկսել հրեաների իրաւական սահմանափակումների վերացման գործը։ Մասնաւորապէս քայլեր անել վերացնելու նրանց նստակեցութեան սահմանը, ինչպէս և դպրոցներ մտնելու և պրոֆեսիաներ ընտրելու իրաւունքը լայնացնել։

8) Հաշտեցնող քաղաքականութիւն Ֆինլանդիայի վերաբերմամբ։ Փոխել ադմինիստրացիայի և սենատի կազմը և դադարեցնել հալածանքը պաշտօնեաների դէմ։

9) Ուկրայինական մամուլի վերաբացում։

10) Անմիջապէս վերաքննել Գալիցիայի բռնագրկված բնակիչների գործերը և ազատել անմեղներին։

11) Վերականգնել արհեստակցական միութիւնների գործունէութիւնը և դադարեցնել հալածանքը հիւանդանոցային դրամարկղների, ինչպէս և բանւորների դէմ, իբրև անլեգալ կուսակցութիւնների պատկանողների։

12) Վերականգնել բանւորական մամուլը։

13) Համաձայնութիւն օրէնսդրական մարմինների՝ շուտափոյթ անց կացնելու հետևեալները.

ա) Բոլոր օրինագծերը, որ վերաբերում են ազգային պաշտպանութեան, զօրքի մատակարարութեան, վիրաւորներին սպասարկելու, փախստականներին տեղաւորելու գործին և ուրիշ հարցերին, որոնք անմիջապէս կապ ունեն պատերազմի հետ։

բ) Օրէնսդրական աշխատանքների ծրագիրը, երկրի կազմակերպութեան և ներքին խաղաղութեան վերաբերմամբ։

1) Հաւասարեցնել շինականների իրաւունքները միւս դասերի իրաւունքներին։

2) Մտցնել մանր գաւառային միաւոր (ВОЛОСТНОЕ ЗЕМСТВО)։

3) Փոփոխել 1890 թվի գաւառային օրէնքը։

4) Փոփոխել 1892 թվի քաղաքային ինքնավարութեան օրէնքը։

5) Մտցնել զեմստվօ Սիբիրում, Արխանգելսկի նահանգում, Դոնի շրջանում, Կովկասում և այլ տեղեր։

6) Հրատարակել օրէնք կօօպերատիվների մասին։

7) Առևտրական ծառայողների հանգստի մասին։

8) Բարւոքել պոստ-հեռագրական ծառայողների նիւթական դրութիւնը։

9) Ընդմիշտ հաստատել ժուժկալութիւնը։

10) Օրէնք հրատարակել գաւառային և քաղաքային համագումարների և ժողովների մասին։

11) Ինսպեկտորների կանոնադրութիւն։

12) Մտցնել հաշտարար դատարաններ այն տեղերում, ուր դադարեցված են եղել ֆինանսական նկատառումներից։

13) Հրատարակել և այլ օրէնքներ, որոնք անհրաժեշտ կը լինեն վերև յիշված ծրագիրը անց կացնելու համար։

Ստորագրել են. Ազգայնական պրօգրէսիվ խմբակի կողմից՝ կոմս Վ. Բոբրինսկի, կենտրոնի ֆրակցիայից՝ Վ. Լվով, զեմց-հոկտեմբերականների ֆրակցիայի կողմից՝ Ի. Դմիտրիւկով, հոկտեմբերի 17-ի խմբակից՝ Ս. Շիդլովսկի, պրօգրէսիստների ֆրակցիայի՝ Ի. Եֆրեմով, ժողովրդ. ազատութեան ֆրակցիայի՝ Պ. Միլիւկով։

Պետ. Խորհրդի անդամներից ստորագրել են Դ. Դ. Գրիմմ և բարոն Վ. Վ. Մէյլեր-Զակոմելսկի։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԸ

Սեպտեմբերի 1-ին կայացաւ քաղաքային դումայի արտակարգ նիստը, որից առաջ, ժամը 8-ին, կայացաւ ձայնաւորների մասնաւոր խորհրդակցութիւն։

Բանալով նիստը, քաղաքագլուխ Ալ. Խատիսեան յայտնեց, որ վերջին օրերս կայացած պետական խոշոր նշանակութիւն ունեցող ակտեր. ռուսական բոլոր զինւորական ոյժերի Գերագոյն Հրամանատարութիւնը ստանձնել է Թագաւոր Կայսրը և Կովկասի նոր փոխարքայ է նշանակվել Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը։

Քաղաքագլուխը կարդում է Բարձրագոյն հրովարտակները, որ դուման լսում է յոտնկայս և ակնածութեամբ։

Ապա Ալ. Խատիսեան արտասանում է մի ճառ, բացատրելով կայացած հրովարտակների ահագին նշանակութիւնը, հասարակական այն մեծ փրկարար շարժումը, որ առաջ է եկել և որի հետևանքով իշխանութեան միութիւնը ժողովրդի հետ լօզունգը ընդհանուր է դարձել։ Նա առաջարկում է ուղարկել Թագաւոր Կայսրին դումայի կողմից հաւատարիմ հպատակութեան զգացմունքները և ժողովրդի իղձն արտայայտող հեռագիր։ Դուման ընդունում է միաձայն։

Ապա որոշվում է ուղարկել նորանշանակ փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչին հետևեալ հեռագիրը.

«Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչին՝ Կովկասի փոխարքային.

«Հինաւուրց Թիֆլիսի ազգաբնակութիւնը խորագոյն ուրախութեան զգացմունքով ընդունեց Ձերդ Կայսերական Բարձրութեան՝ Կովկասի փոխարքայի և կովկասեան քաջարի զօրքի ընդհանուր հրամանատարի պաշտօնին կոչվելու տեղեկութիւնը։ Այդ մեծ նշանաւոր դէպքի մէջ Թիֆլիսի ազգաբնակութիւնը տեսնում է ռուս երկրի Ինքնակալ Պետի առանձին բարեացակամ վերաբերմունքը դէպի Կովկասը, Պետի, որ ցանկացաւ այսպիսի պատասխանատու ժամանակ երկրի կառավարութիւնը յանձնել Կայսերական Տան Անձին՝ երկրորդ հայրենական պատերազմի հերոսին, որ դէպի ինքը գրաւեց բովանդակ Ռուսաստանի սէրն ու երախտագիտութիւնը՝ ռուսաց պանծալի զօրքին յանդուգն և ուժեղ թշնամու դէմ առաջնորդելու օրերում։

Երկրի բազմացեղ ազգաբնակութիւնը, որ այնպէս ուժեղ կերպով երևան հանեց պատերազմի ներկայ ժամանակ հոգու միութիւն և անքակտելի կապ բուն Ռուսաստանի հետ, առաջին անգամ Ձերդ Կայսերական Բարձրութեան բերանից լսեց ազնւարոգ խօսք՝ մեր մեծ հայրենիքում բնակվող առանձին ժողովուրդների ինքնուրոյնութեան մասին։

Թիֆլիսի քաղ. դուման, սեպտ. 1-ի իր արտակարգ նիստում, լսելով Բարձրագոյն ռեսկրիպտը յանուն Ձերդ Կայսերական Բարձրութեան, արտայայտում է իր ամենահպատակ զգացմունքները, Օգոստափառ Փոխարքայ՝ Ձերդ Կայսերական Բարձրութեանը։

Միացած մեր պանծալի պաշտպան հիւանդ ու վիրաւոր զօրականներին խնամելու ընդհանուր գործում, Թիֆլիսի ազգաբնակութիւնը յանձին քաղաքային դումայի այսուհետև էլ անշեղ կը կատարէ Ձեր Կայսերական Բարձրութեան Բարձր փորձված ղեկավարութեամբ իր սրբազան պարտականութիւնը հանդէպ զօրքը։

Թող Տէրը Ձեզ ոյժ պարգեւէ՝ տանելու պատասխանատու ծառայութիւնը Ցարին և Հայրենիքին՝ ջախջախելու թշնամուն և բարւոքելու մեր քաղաքի և երկրի բոլոր հասունացած կարիքները։

Թիֆլիսի քաղաքագլուխ»։

Իսկ նախկին Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովին հետեւեալ հեռագիրը.

«Նորին Պայծառափայլութիւն կոմս Իլարիոն Իվանովիչ Վօրոնցով-Դաշկովին.

Թիֆլիսի քաղաքային դուման, լսելով սեպտեմբերի 1-ի իր արտակարգ նիստում Բարձրագոյն ռեսկրիպտը յանուն Ձերդ Պայծառափայլութեան, լիագօրեց ինձ արտայայտել Ձերդ Պայծառափայլութեանը նրան ազնւարոգ զգացմունքները։ Կովկասը 10 տարի կառավարելու առիթով պատմութիւնը կարձանագրէ Ձերդ Պայծառափայլութեան մատուցած այնպիսի ծառայութիւնները, ինչպիսին օրինակ Կովկասում խաղաղութիւն մտցնելը, կենսական հարցերի մշակումը, ահագին ծայրերկրի ազգաբնակութեանը կենտրոնական Ռուսաստանի կուլտուրայի բարիքներին հաղորդակից անելը, Ձերդ Պայծառափայլութեան մօրալ ու նիւթական աջակցութեամբ Կովկասի առաջին բարձր կրթութեան տնկարանի հիմնարկէքը, Կովկասի քաղաքային համագումարներին հաւանութիւնը, որոնց ցանկութիւնն է բարւոքել տարացեղ Կովկասի կարիքները, վերջապէս Ձերդ Պայծառափայլութեան լուսամիտ աջակցութիւնը քաղաքային ինքնավարութիւնների նախաձեռնութիւններին ու աշխատանքներին, որոնք միշտ էլ յանձին Ձեր գտել են իրանց իրաւունքների ու արտօնութիւնների պաշտպանին. այս ամենը իրաւունք է տալիս յաւերժացնել Ձերդ Պայծառափայլութեան անունը Կովկասի տարեգրութեան մէջ, իբրև մարդասէր ու լուսամիտ պետական գործչի և մարդու։

Եւ Թիֆլիս քաղաքը, ինչպէս և կովկասեան մի շարք քաղաքներ, մեծ պատիւ է համարում համարել Ձերդ Պայծառափայլութեանը իր պատուաւոր քաղաքացին։

Ողջունելով Ձերդ Պայծառափայլութեան, Թիֆլիսի քաղ. դուման խորին յարգանք է մատուցանում Ձեր Պայծառափայլութեանը և արտայայտում է իր խորագոյն շնորհակալութիւնը բոլոր Ձեր ցոյց տուած բարեացակամութեան ու վստահութեան համար դէպի հասարակական տարրերը և անկեղծ բարեմաղթութիւններ է անում, ցանկանալով Ձեզ ոյժ ու առողջութիւն։

Թիֆլիսի քաղաքագլուխ»

Այս որոշումներից յետոյ քաղաքագլուխը յայտնում է, որ ինչպէս իրան հեռագրել է Մոսկվայի քաղաքագլուխ Չելնօկովը, սեպտեմբերի 7-ին Մոսկվայում կայանալու է Համառուսական Քաղաքային Միութեան կոնգրէսը, որին հրաւիրված է մասնակցելու և Թիֆլիսը, իբրև Միութեան անդամ։ Որովհետև Միութեան Կովկասի Բիւրօյի անդամները զբաղմունքի պատճառով չեն կարող գնալ, առաջարկում է խնդրել ձայնաւորներ պ. պ. Ն. Դոլուխանեանին, Շալվա Ալեքսէյ Մեսխիէվին և Ա. Բաբեանին գնալ իբրև ներկայացուցիչներ։ Դուման հաւանութիւն է տալիս այս առաջարկին։

Ապա, օգտվելով այն հանգամանքից, որ Թիֆլիս հիւր եկած Պետական Դումայի անդամ Նովիկօվը ներկայ է գտնվում նիստին (Նովիկօվը բերել է Մոսկվայի կողմից ընծաներ, կովկասեան զօրքի համար), Խատիսեան յանձին նրա ողջունում է Մոսկվան, որ սիրտն է Ռուսաստանի և այժմ ժողովրդական մեծ շարժման ղեկավարն է։ Դուման ծափահարութիւններով ողջունում է Նովիկօվին, որ, զգացված պատասխանում է մի քանի ջերմ խօսքերով Թիֆլիսը, իբրև Կովկասի սիրտը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ Թիֆլիս եկաւ սանիտարական և վիրաւորներ տեղափոխող մասի Գերագոյն Կառավարչի ներկայացուցիչ Նորին Մեծութեան շքախմբի գեներալ մայոր Բերնով։ Նա նպատակ ունի պարզելու, թէ համաճարակների դէմ կռւելու համար ինչպիսի՝ կարիքներ են զգացվում, և թէ այդ բանի համար որքան գումար պէտք է բաց թողնել Ն. Կ. Բ. պրինց Ա. Պ. Օլդենբուրգսկիի տրամադրութեան տակ եղած գումարից։

◆ Այս օրերս քաղ. վարչութիւնը քննելու է քաղաքի 1916 թ. եկամտից նախահաշւի նախնական ծրագիրը։

◆ Որովհետև վաճառականները նորից բարձրացրել են շաքարի գինը, այդ պատճառով ոստիկանապետը առաջարկել է պրիստավներին ստուգել, թէ որքան շաքար կայ պահեստներում, և եթէ լինեն թագցրած պահեստներ, այդպիսիների տէրերի վրա արձանագրութիւն կազմել, նրանց պատասխանատուութեան ենթարկելու՝ արհեստական կերպով շաքարի գինը բարձրացնելու համար։

◆ Ներկայումս Թիֆլիսումն է գտնվում Պետ. Դումայի անդամ Մ. Մ. Նովիկօվ։ Նա Մոսկվայից իր հետ բերել է ընծաներ և հագուստներ մեծ տրանսպորտ կովկասեան զօրքերին բաժանելու համար։

◆ Նորերս վերսկսվեցին Թիֆլիսի պոլիտեխնիքական ինստիտուտի գլխաւոր շինութեան հողային աշխատանքները։

◆ Քաղ. ինժ. Լիսիցեան առաջարկում է քաղ. վարչութեանը՝ վերացնել այն սայլերի գործը, որոնք արտահանում են տների աղբը, որովհետև դրանցով քաղաքի մաքրութիւնը իր նպատակին չի հասնում։ Նա առաջարկում է նորից վերակազմել այդ գործը։ Տներից աղբը կանոնաւորապէս արտահանելու գործը կարգի դնելու համար, ինժ. Լիսիցեանի նախագծով, ամսական պահանջվում է 8000 ռուբլի։

◆ Մինչև այժմ քաղ. վարչութեան դիմել են մօտաւորապէս 100 խնդրողներ զինւորների օրական ապրուստի փող (25 կոպ.) խնդրելով 1915 թ. յունվարի 1-ից սկսած։

◆ Քաղ. վարչութիւնը նահանգապետի հաստատութեանը ներկայացրեց ուտեստի մթերքների և անասունների կերի վերաբերեալ ընդհանուր սակագինը։ Գործող (պաշտօնական) սակագնի համեմատութեամբ՝ այս նորի մէջ արված են աննշան փոփոխութիւններ։

◆ Գ. Յուսիկ Գնթունին խնդրում է մեզ տպել հետևեալը. «Կիրակի, օգոստոսի 30-ին, կէսօրվայ ժամը $12^1/_2$-ին, Վանքի մայր տաճարի գաւթում, խռնւած հասարակութեան, ինտելիգենցիայի, մամուլի ներկայացուցիչների և Թիֆլիսաբնակ ընկերների ներկայութեամբ կատարվեց հոգեհանգիստ ի յիշատակ Կ. Պոլսում, Վանում և այլուր, այլև մարտի դաշտում ընկած հնչակեան կամաւորների և մարտիրոսների։ Յայտնի է, որ ներկայ տարվայ յունիսի 2-ին Կ. Պոլսում պատերազմական ատեանի կողմից պետական դաւաճանութեան մէջ մեղադրվելով կախաղան հանվեցին 20 հնչակեաններ, որոնց թւումն էին Փարամազ, Ռ. Կարապետեան, Ա. Աչըքպաշեան, Վ. Վանիկեան, դոկտոր Պէնէ և այլք։ Յայտնի է նմանապէս, որ Վանում ապստամբութեան օրերին բանտի մէջ խեղդամահ արվեցին 5 հնչակեաններ, որոնք նմանապէս բանտարկված էին երկար ժամանակ մեղադրվելով նմանապէս պետական դաւաճանութեան մէջ։ Այս զոհերին վերջերս աւելացաւ նաև Յար. Գասպարեանի կազմած կամաւորական գնդի փոխ-հրամանատար դրուժինայի հեծելազօրի հրամանատար Լևոն Ծատուրեանը, որ յայտնի դարձաւ անցեալ տարվայ դեկտեմբերին Կարսի շրջանի Աղջաղալէ գիւղի մօտ տեղի ունեցած կռիւներում և վերջերս, օգոստոսի 6-ին, Խնուսի մօտ, Ալթուն-Թաշի լերան շրջակայքում թշնամու հետ կռիւ մղած ժամանակ ընկաւ հերոսական մահով։ Դամբանականներ խօսեցին Ե. ք. Ձուղուրեան, պրոֆ. Մինասեան, դոկտոր Ս. Տաշիր, Հ. Բժշկեան, Զ. Յովհաննիսեան և Յար. Գասպարեան։ Ժամը 2-ին աւարտվեց արարողութիւնը։ Նկատելի էր առաջնորդի բացակայութիւնը»։

◆ Ներկայ տարվայ օգոստոսի սկզբից Ռուսչուկ (Բօլգարիա) քաղաքում սկսել է լոյս տեսնել հայերէն մի կիսաշաբաթաթերթ «Բալկանեան Մամուլ» խորագրով, որը առ այժմ լոյս է տեսնում շաբաթը երկու անգամ խմբագրութեամբ Ս. Սապահ-Գիւլեանի։ Նայած սկզբի թիւերին, թերթը խոստանում է բովանդակալից և հետաքրքրական լինել։ Աշխատակիցների թւում կան մի շարք աչքի ընկնողներ մեր արտասահմանեան գրականագէտներից։ Սրտագին աջողութիւն ենք մաղթում մեր նոր պաշտօնակցին։ Աչքի առաջ ունենալով, որ թերևս մեր մտաւորականներից մի շարք անձինք կը ցանկանան ունենալ թերթի հասցէն, ստորև դնում ենք այն. Redaction du journal «Balkanian Mamoul», Rue Nicolaevska № 104. Roustchouk (Bulgarie)։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են Պետրոգրադից, որ Տաւրիկեան պալատում մեծ յուզմունքով են հետեւում՝ թէ ինչ վճիռ է կայացնելու մինիստրների խորհուրդը։ Պրեմիէր Գորեմըկինը արդէն վերադարձել է Արքայական կայանից և տալու է իր զեկուցումը խորհրդի նիստում, ուր և վճռուելու է այն կենսական հարցը, թէ արդեօք փոխե՞լ կաբինէտը թէ՞ արձակել Դուման։

◆ Ռուսաստանի զանազան քաղաքներից ստացւում են նոր տեղեկութիւններ այն մասին, որ քաղաքային դումաները բանաձեւերով միանում են Մոսկվայի դումայի արած պատմական յայտարարութեան, թէ երկիրը պահանջում է պատասխանատու մինիստրութիւն։

◆ Գորեմըկինի Արքայական Կայանից վերադառնալուն պէս կայացաւ մինիստրների մասնաւոր խորհրդակցութիւն, որին ներկայ էին Խարիտոնով և կոմս Իգնատեվ։ Գորեմըկինի հաղորդածներից երեւաց, որ Պետ. Դումայի զբաղմունքների ընդհատումը լինելու մօտ օրերս։

◆ «Рѣчь»-ի ասելով, Գորեմըկինը յայտնել է մինիստրներին, թէ Պետ. Դումայի տրամադրութիւնը չի համապատասխանում մոմենտին, որ պահանջում է ամեն ուժի լիակատար լարումն պատերազմը հասցնելու իր յաղթական վախճանին։ Րօձեանկօյի կարծիքով, Պետ. Դուման կը ցրվի սեպտ. 15-ին։ Կառավարութեան կազմի մէջ փոփոխութիւն չի նախատեսվում։

◆ Գորեմըկինը յայտնել է, որ իր հրաժարականը մերժվել է։

◆ «Р. Сл.»-ն յայտնում է, որ մինիստրների խորհուրդը ընդունեց Գորեմըկինի բանաձեւը՝ Պետ. Դումայի զբաղմունքների դադարեցման և վերևից բարենորոգումների լինելու մասին։

◆ Ներքին գործերի մինիստր իշխ. Շչէրբատովը հրահանգով պատուիրել է իր բնում խեղդել անկարգութիւնների ամեն մի փորձ, որ կը լինի հրէաների դէմ՝ վերջինների բնակատեղիների հարցի առիթով։

◆ Հաղորդւում են, որ մինիստրների խորհրդի նիստում, օգոստ. 28-ին, Գորեմըկինը և իշխ. Շախովսկին պնդել են Պետական Դուման արձակելու վրա, պատճառաբանելով թէ պատգամաւորների ճառերը ընդունակ են առաջ բերելու յուզմունք ազգաբնակութեան մէջ։ Դրա դէմ բուռն կերպով առարկել են Խարիտոնովը և իշխ. Շչէրբատովը, որոնք մատնանշել են, թէ հէնց Դուման արձակելը առաջ կը բերէ յուզմունք։ Մի մինիստրի ասելով, հնարաւոր է, որ գերակշռէ առաջին հոսանքը, և Դուման կարձակվի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՈՒՂԻՑ

Քրիստիանիա, 25 յուլիսի

Հայը ամենուրեք և իւրաքանչիւր պարագային, միշտ և հանապազ եղել է քսութեան նշաւակ։ Ով առաւօտ վաղ վեր է կացել, հայի գլխին է բամփել. ով խաչագողութիւն, վատութիւն, ստոր արարք է թոյլ տուել իրան, հայն է տուժել ամեն տեղ։ Կարճ՝ մեր պատմութեան ո՛ր էջն էլ թերթելու լինէք, կը համոզվէք, որ ով վատ է եղել, ցածութիւն է արել, դաւաճանել է, վաճառել է, այդ բոլորի փոխարէն հայն է տուժել, հայն է զրախօսութեան և պարսաւանքի առարկայ դարձել։ Քանիցս եղել են դէպքեր, երբ մեր այս կամ այն հարեւանն օտար տեղերում բռնվել է այս ու այն յանցագործութեան մէջ և ինքն իրան կամ, աւելի ճիշդը, իր ազգութեանը արատ չը բերելու համար՝ իրան հայ է յայտարարել, որով իր ստոր կամ այպանելի արարքի համար հայի անունն է կապվել, հայն է վարկաբեկվել յաչս օտարների։ Եւ հէնց այս պատճառով է, որ շատ տեղերում, բազում ազգ ու ազինք մեր մասին յոյժ թիւր և յոռի կարծիք ունին։

Սրանց կարծիքով՝ հայը և՛ խաչագող է, և՛ խաբեբայ է, և խարդախ է, և վախկոտ է, և սողացող է, և քծնող է. մի խօսքով՝ հայը կատարեալ շտեմարան է ամեն տեսակ բացասական յատկութեանց և արժանի է ամենաստոր էպիտէտների, ածականների։ Որ ռուսների, գերմանացիների, մասամբ ֆրանսիացիների և այլ ազգերի ստուար մասերը դեռ այսօր էլ մեր մասին չեն դադարում զրպարտելուց և մեզ անուանարկում, մեր ազգային ինքնասիրութիւնն ու պատիւն են շատ յաճախ շօշափում, սա մի ակսիօմա, մի ճշմարտութիւն ճշմարտութեանց է։ Սակայն, որ նմանօրինակ վերաբերմունք դէպի հայերը կարող էին ունենալ, դիցուք, նորվեգները, այս մասին ես երբէք մտքովս իսկ անցնել չէի կարող, և, կարծում եմ, ինձ հետ ոչ մի հայ էլ այդ մասին չէր մտածի։ Բայց արի տես, որ սա փաստ է, ափ-աշկարա կատարված իրողութիւն, կուլտուրական Նորվեգիայում, ուր մարդիկ այնքան յաւակնոտ են, որ շարունակ բարձր մատերիաների մասին են ճառում, իրանց նկատմամբ մեծ համարում ունեն, իսկ ուրիշների ազգային արժանապատւութեան հետ են խաղում դատարկ պատճառից դրդված, առանց հետախոյզ լինելու, թէ ո՛ր աստիճան մեղաւոր է հայը, հէնց թէկուզ նա լինի մի անհատ։ Երկարաբան չը լինելու համար, պատմեմ այն դէպքը, որն ինձ, ճամբորդելիս, հարկադրեց ճանապարհորդական նօթերս և տպաւորութիւններս մէկդի նետել և այլ նիւթերի մասին գրել։

Նախ և առաջ պիտի ասեմ, որ այս քաղաքում ես չը հանդիպեցի ոչ մի հայի (թէև առ հասարակ ասում են, որ ամեն տեղ հայ կարելի է գտնել). հայ չը գտնելով, բնականաբար, ուզեցի գէթ վրացի կամ ռուս գտնել, բայց ապարդիւն։ Վերջապէս գտայ ազգով սլովէն մի ուսանող (աւստրիահպատակ), որը մի քանի տարի առաջ ուսանելիս է եղել Պետրօգրադի համալսարանում և այնտեղից, Տօլստոյեան ցոյցերի պատճառով, իբրև օտարահպատակ, արտաքսվել է ռուսական կայսրութեան սահմաններից և այժմ ահա երրորդ տարին է, ինչ ուսանում է տեղիս համալսարանում, բնագէտ-բուսաբան է։ Երեւակայեցէք մի ազնիւ տիպ, մաքուր հոգի, ինչպէս մեզ մօտ կասեն, պարզ ջրի հետ խմվելիք մէկն է նըկարագրածս երիտասարդը։ Թէև ինքը աւստրիահպատակ է, բայց պիտի տեսնէք, թէ որպիսի անձկանօք է սպասում Ռուսաստան վերադառնալու արտօնութիւնը ստանալու, որի մասին որպէս ինքը, նոյնպէս և իր մայրն ու քոյրերը միջնորդութիւն են յարուցել մեր կենտրոնական կառավարութեան առաջ, երկար ժամանակէ ի վեր։

Չերկարաբանելու համար, որպէս զի պարզ լինի նրա ռուսասիրութեան մասշտաբը, պիտի ասեմ, որ Ռուսաստանի իւրաքանչիւր՝ նոյն իսկ թեթեւակի աջողութիւնը նրա համար հարազատ է, իսկ ամենափոքր պարտութիւնը պատում է նրա պարզ ու յստակ ճակատը մռայլ ամպերով։

Մեր այս իդէալիստ նորագիւտ բարեկամի անունն է Իւրիյ Կօ։ Ահա այս ժպտադէմ երիտասարդը, որի հետ ծանօթացայ փողոցում մի գործով ռուսաց դեսպանատուն գնացած ժամանակս, այսօր մտաւ ինձ մօտ և իր հետ բերեց տեղական պահպանողական կուսակցութեան օրգան «Aftenposten» թերթի 373-րդ այսօրվայ թւակիր համարից կտրված մի յօդուած, որի մէջ մեզ հայերիս, մի լաւ, «զօրս դու պատուիրեցեր» հայհոյում են կուլտուրական նորվեգները։

Ինչու։

Բայց այդ մասին յաջորդ նամակով։

Ցար. Գասպարեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ՄԱԿԷԵՎԿԱ, Հմայեակ Էլիազեանին.— Ձեր ուղարկած 50 ռ. մասին յօգուտ փախստականների յիշատակված է «Մշակի» այս տարվայ № 191-ի մէջ։

ՍԱՄԱՐՂԱՆԴ, Գողթականին.— Ձեր ուղարկած 10 ռ. մասին յօգուտ գաղթականների յիշատակված է «Մշակի» այս տարվայ № 188-ի մէջ։

ԲԱԳՈՒ, Գարեգին Ծանակերտեանին.— Մեր խմբագրատան մէջ ձեր անունով նամակ կայ։ Հաղորդեցէք մեզ ձեր հասցէն, որպէսզի նամակն ուղարկենք ձեզ։

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ)7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ПРИ ГОНОРРЕѢ

въ острой и хронической формѣ. а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ

„АРМАТИНЪ“ А. Я. АКУЛІАНЦА

для внутренняго употребленія. „Арматинъ“ совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина“ не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ“ А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ“ только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.

(հ. կ.) 174. 0—47

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բոլոր հայ գրախանութներում վաճառվում են ծխական և պետական դպրոցների համար իմ կազմած

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐԵՐԸ

Ա., Բ., Գ. Դ., տարիներ, (Հին-Ուխտ, Նոր-Ուխտ և Գործք-Առաքելոց)։ Ստանալ ցանկացողները կարող են դիմել՝ 1) ինձ—Бебутовская 52 և 2) «Գիր» գրավաճառանոցին։ Զեղչ 25%։

ՍԱՀԱԿ ա.-ք. ՍԱՀԱԿԵԱՆ

(հ. կ.) 523. 8—4

Մեծ-Ղարաքիլիսայի

հայոց եկ.-ծխ. դպրոցի համար հարկաւոր է

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

17 դ. հայոց, 2 դ. կրօն. և 5 դ. թւաբ. =24 դ., դասագինը 22 րուբլի։ Եթէ մեզնից անկախ պատճառով դասերը դադարեն՝ կը ստանայ ծառայած ժամանակի լրիւ ռոճիկը և չը ծառայածի 50%-ը։ Աւարտ. վկ. պատճ. և խնդիրն ուղարկել հոգ. խորհրդի նախ. բժ. Ա. Վարդանեանի անուամբ։

612. 4—1 Հոգաբարձութիւն

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և ըէցէպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրօնիքական տրիպէրի և բժշկութեան մասին, ըէցէպտներով։ Գինը 50 կոպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒՈՒ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը։ Բազմաթիւ անյայտ դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։

3) «ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդօտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տկճորի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գրքերը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ

երկու հետևեալ գրքերը. 1) «Կնիկարմատի շալվարը» ծիծաղաշարժ վոդեվիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.)։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէրէվօդով։ (Մարկաներ չը դնել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ)։ Հասցէս՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

(հ.կ.) 311. 100—35

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԻՆԺԵՆԵՐ

Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բագու, Կրասնօվօդսկայա փ. տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար խակապէս ԴԻԶԷԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզէլ» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. Նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ուժին $^{1}/_{2}$ ֆունտ կամ 200 գրամմ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատօրային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։

Ամեն տեսակ էլեկտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։

Երկրագործական մեքենաներ՝ լոկոմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur

(հ.կ.) 551. 150—128

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող

Հաշուապահական Կուրսեր Դ. Կ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ Թիֆլիս, Նիկօլայէվսկայա փող., № 36,

Նոյն տեղը ՊԱՆՍԻՕՆ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ

Ընդունվում են աշակերտներ լրիւ պանսիօնով, դասերի պատրաստութեամբ և առանց Խնդիրների ընդունելութիւնը երեկոյեան ժամը 3—7-ը։

(ե. հ. շ. կ.) 541. 50—13



Бичъ человѣчества побѣжденъ.

На леченіе хроническаго триппера нужно потратить только 50 минутъ и Вы избавитесь разъ навсегда отъ этого недуга который Васъ мучилъ несколько лѣтъ, подтачивалъ Ваше здоровье, разрушалъ Вашъ организмъ и укорачивалъ Вашу жизнь.

ДАРОВОЙ РЕЦЕПТЪ.

Нужно взять только 2 двойныхъ флакона „рапидъ“ и коробку пилюль разрѣшен. медиц. совѣтомъ за № 1295 и ежедневно теряя на леченіе только двѣ минуты въ теченіе трехъ недѣль будете совершенно здоровы. Въ теченіе пяти лѣтъ изобрѣтенный мною средство „рапидъ“ излечило десятки тысячъ больныхъ и успѣло заслужить громкую извѣстность по всей россіи и даже заграницей.

Кромѣ того, преимущество моего предложенія заключается въ томъ, что Вы матеріально не рискуете, такъ какъ, если не излечитесь, то по полученіи отъ Васъ анализа мочи, указывающ., что болѣзнь не излечена, я немедленно возвращу Вамъ деньги, затраченныя на покупку моего лекарства.

Такая увѣренность въ благопріятномъ дѣйствіи моего препарата „рапидъ“ основана на четырехлѣтнемъ съ нимъ опытѣ.

За это время тысячи больныхъ пользовались „рапидомъ“ и результатомъ пользованія во всѣхъ случаяхъ было полное излеченіе, на что у меня имѣются доказательства въ видѣ очень многочисленныхъ благодарностей-писемъ. Такіе результаты говорятъ сами за себя и даютъ мнѣ полное право смѣло заявить что случаевъ неизлеченія препаратомъ „рапидъ“ нѣтъ, и каждый больной, употребившій два двойныхъ флакона препарата „рапидъ“ безусловно излечивается, какъ бы болѣзнь долго ни продолжалась.

Обращаю вниманіе больныхъ на то обстоятельство, что моя увѣренность въ средствѣ „рапидъ“ и мое обѣщаніе не голословны, въ подтвержденіе чего каждому, выписавшему отъ меня 2 двойныхъ флакона препарата „рапидъ“, я вмѣстѣ съ лекарствомъ высылаю обязательство о возвратѣ денегъ въ случаѣ неизлеченія.

Цѣна за два двойныхъ флакона (полный курсъ леченія) и коробка пилюль 9 руб. Наложен. плат. и съ пересылкой 10 р. Нал. платеж. высылается только по полученіи 3 руб. задатка.

Заказы и требованія адресовать исключительно въ Кавказское отдѣленіе Московской Лабораторіи, М. Деламуръ, Тифлисъ Эриванск. пл. Пушкинская 3 отд. 6 М. верхный этажъ.

(կ.) 609. 50—1

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան հովանաւորութեան ներքոյ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ

(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24, տէլ. № 9—76.)

Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից։

(կ. ե. հ.) 480. 0—21

Լոյս են տեսել և վաճառվում են

ՍԱԼ-ՄԱՆԻ

ՀԱՅԱԶԳԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

Պատկերազարդ հետեւեալ գրքերը.

1-ին. Գեներալ-ադիւտանտ ԿՈՄՍ Մ. ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ 40 կ.
2-րդ. Դաղստանի և Կարսի հերոս գեներալ-ադիւտանտ Յ. ԼԱԶԱՐԵԱՆ 30 կ.
3-րդ. Բայազէտի հերոս գեներալ-լէյտենանտ ԱՐՇ. ՏԷՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆ 35 կ.

Երեք գրքերը միասին՝ ճանապարհածախսով և վերադիր վճարով արժէ 1 ր. 35 կ.։

Դիմել հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, Бебутовская ул. № 6. Екатеринѣ Айруни.

(ե.հ.) 699. 10—3

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.